ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 572-Ա **07 դեկեմբերի 2020 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի Ն 15.2-33599-20 հանձնարարականը և ՀՀ վիճակագրական կոմիտեի <<ԱՐՄՍՏԱՏ>> վիճակագրական աշխատանքների ծրագիրը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Պետրոսյան Մ. - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող, նախագահ

Բաղալյան Հ. - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալության տնօրեն /համաձայնությամբ/

Ավագյան Ս. - <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն >> ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային կենտրոնի պատասխանատու /համաձայնությամբ/

Մելքոնյան Ս. - ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների մոնիթորինգի վարչության Գեղարքունիքի բաժնի պետ /համաձայնությամբ/

Հանձնաժողովի կազմում ընդգրկել մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/

2. Մարզի տարածաշրջաններում անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու պատասխանատվությունն ըստ տարածաշրջանների դնել մարզպետարանի ներքոհիշյալ մասնագետների վրա՝

Պետրոսյան Մ. - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող, Ճամբարակի և Սևանի տարածաշրջաններ

Բաղեյան Ռ. - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններ

Շահբազյան Կ. - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ, Գավառի տարածաշրջան

3. Հանձնաժողովին՝ մարզի տարածաշրջաններում անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքներն իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից 18-ը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող Մարտին Պետրոսյանին:

07.12.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

Ք. Գավառ